ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 41. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1

Նա համոզված էր, որ Աստված իրեն ընտրել է Ֆրանսիան ազատագրելու համար: Հեռանալով տնից, 18-ամյա Ժաննան հասավ երկրի հարավի այն ամրոցը, որտեղ գտնվում էր Ֆրանսիայի գահաժառանգ Կառլը: Տեսակցելով արքայազնի հետ՝ Ժաննան նրան համոզեց իրեն ասպետների ջոկատ տալ և միացավ Օռլեանին օգնության շտապող ֆրանսիական զորքին:

Տրամադրությունը ֆրանսիական զորքում Օռլեանի մոտ հաղթանակից հետո. Ազնվազարմ պատանու՝ իր հարազատներին գրած նամակից.

Թագավորը այնպիսի մեծ զորք ունի, որպիսին վաղուց է, ինչ չէինք տեսել, մարդիկ երբեք այդպիսի հաճույքով ռազմի գործերի չէին գնացել, ինչպես այժմ: Իմ վաշտը նույնպես մեծանում է, բայց արքունիքն այնքան քիչ դրամ ունի, որ ես ոչ մի օգնության հույս չունեմ: Այդ իսկ պատճառով, մայրիկ, խնդրում եմ վաճառել իմ հողերը, կամ թե դրամ հայթայթելու մի ուրիշ ելք գտեք մեր պատվի փրկության համար: